ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-22/8-Ա

ք. Երևան «29» հուլիսի 2022թ.

«Ջրային կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Ա. Ղազարյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՄՄՎ ՇԻՆԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Մ. Հովհաննիսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված

Չափաբաժին 2

գետերի ափերի պաշտպանության աշխատանքներ - <<Մեծամոր գետի ափապատնեշի բարձրացում մոտ 800 մ երկարությամբ հատվածում >>

Չափաբաժին 3

գետերի ափերի պաշտպանության աշխատանքներ - <<ք.Ապարանի «ՔՅԱՆԴԱԼ» կոչվող սելավատարի մաքրում մոտ 2500 մ հատվածում>>

աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ Չափաբաժին 2 գետերի ափերի պաշտպանության աշխատանքներ - <<Մեծամոր գետի ափապատնեշի բարձրացում մոտ 800 մ երկարությամբ հատվածում >> - 53 օր, Չափաբաժին 3 գետերի ափերի պաշտպանության աշխատանքներ - <<ք.Ապարանի «ՔՅԱՆԴԱԼ» կոչվող սելավատարի մաքրում մոտ 2500 մ հատվածում>> - 8 ամիս (համաձայն նախագծային փաստաթղթերի):
աշխատանքների կատարման վերջնաժամկետը

Աշխատանքների կատարման երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից պայմանագրի արդյունքն ընդունելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը:

1.3.1 Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

1.3.2 Պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետների մեջ չեն հաշվարկվում.

1.3.2.1 հեղինակային և/կամ տեխնիկական հսկողության պայմանագրերի լուծման դեպքում՝ պայմանագրերի լուծման օրվանից մինչև նոր պայմանագրերի կնքմանը հաջորդող օրն ընկած ժամանակահատվածը,

1.3.2.2 շինարարական աշխատանքների կատարումն անհնարին դառնալու օրվանից մինչև դրանց վերսկսելու օրն ընկած ժամանակահատվածը, որն արձանագրվում է տեխնիկական և հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպությունների առաջարկության հիման վրա՝ պատասխանատու ստորաբաժանման կողմից տրված եզրակացությամբ:

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի

կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N 2.1 Հավելվածում:

3.4.10 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.1.1 Կապալառուն ներկայացնում է կատարողական փաստաթղթերի փաթեթը, որը պետք է կազմված լինի տեխնիկական հսկողություն և հեղինակային հսկողություն իրականացնող անձանց մասնակցությամբ:

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **116 748 468** (մեկ հարյուր տասնվեց միլիոն յոթ հարյուր քառասունութ հազար չորս հարյուր վաթսունութ) ՀՀ դրամ, որից 19 458 078 (տասնինը միլիոն չորս հարյուր հիսունութ հազար յոթանասունութ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

2-րդ չափաբաժին 26 102 628 (քսանվեց միլիոն մեկ հարյուր երկու հազար վեց հարյուր քսանութ) ՀՀ դրամ՝ որից 4 350 438 (չորս միլիոն երեք հարյուր հիսուն հազար չորս հարյուր երեսուն ութ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

3-րդ չափաբաժին 90 645 840 (ինսուն միլիոն վեց հարյուր քառասունհինգ հազար ութ հարյուր քառասուն) ՀՀ դրամ՝ որից 15 107 640 (տասնհինգ միլիոն մեկ հարյուր յոթ հազար վեց հարյուր քառասուն) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

5.1.1 Պայմանագրի գնից՝ մինչև **17 512 000** (տասնյոթ միլիոն հինգ հարյուր տասներկու հազար) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կապալառուին վճարումներ չեն կատարվում:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 18 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N2.1, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Ջրային կոմիտե	«ՄՄՎ ՇԻՆԳՐՈՒՊ» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա	ՀՀ ք. Երևան, Նոր-Նարքի Մոլդովական փող., շենք 27, բն. 78
հեռ. 010 54-02-29	հեռ. 091-41-47-01
Հ/Հ 900011567386	էլ. փոստ mmvshingroup@mail.ru
ՀՎՀՀ 02555816	Հ/Հ 15100056084440100
Կոմիտեի գլխավոր քարտուղար	ՀՎՀՀ 01019617
	Տնօրեն
Ա. ՂԱԶԱՐՅԱՆ	Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված թիվ 1
«29» հոկտեմբեր 2022թ. կնքված
ՁԿ-ՀԲՄԱՇՁԲ-22/8-Ա ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ
« ԳԵՏԵՐԻ ԱՓԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ»
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Չափաբաժին 2
գետերի ափերի պաշտպանության աշխատանքներ - Մեծամոր գետի ափապատնեշի բարձրացում մոտ 800 մ երկարությամբ հատվածում

ՀՀ	Աշխատանքների անվանումը	Չափ. միավորը	Քանակը	Միավորի արժեքը, հազ.դրամ	Ընդհանուր արժեքը, հազ.դրամ
1	*2*	*3*	*4*	*5*	*6*
	1.Մեծամոր գետի ափապատնեշի բարձրացում մոտ 800մ հատվածում:				
	Հողային աշխատանքներ				
1.1	Գետի շեպի մաքրում դամիշներից և բուսականությունից	մ^2	1560	0.1000	156.00
1.2	III րդ կարգի բնահողերի քանդում էքսկավատորով կողլցումով	մ^3	618.45	0.4000	247.38
1.3	III րդ կարգի բնահողերի քանդում ձեռքով կողլցումով	մ^3	26.55	1.2000	31.86
1.4	III րդ կարգի բնահողերի քանդում էքսկավատորով բարձումով ինքնաթափ	մ^3	562.00	0.4000	224.80
1.5	Բարձաց բնահողի տեղափոխում 3կմ հեռավորությունից	տ	983.50	0.5000	491.75
1.6	Հողային լիրքի ստեղծում բուլդոզերով օգտակար հանույթի և բերովի բնահողերից	մ^3	845.00	0.1000	84.50
1.7	Հողային լիրքի խտացում 6տ գլդոնով , շերտի հաստ. 0.6մ, 2 անցումով մեկ հետքի վրայով	մ^3	845.00	0.1000	84.50
1.8	Հողային լիրքի ստեղծում ձեռքով օգտակար հանույթի բնահողերից, տոփանումով	մ^3	362.00	0.5000	181.00
1.9	Գաբիոնի տեղադրում, չոր պայմաններում առանց ցանցի գործման, ներառյալ քարի արժեքը, մատակարարումը	մ^3	1040.0	9.40	9776.00

1.10	Պատրաստի գաբիոնի ցինկապատ ցանցապարկ 2x1x1 չափերի, լարի Φ2.7մմ, արժեք, մատակարարում	հատ	520	14.50	7540.00
1.11	Ցինկապատ լար գաբիոնի ցանցապարկի կապելու համար, արժեք, մատակարարում	մ	4160.00	0.05	208.00
	Ընդամենը ըստ 1 բաժնի				**19025.79**
	Շահույթը 11%				**2092.84**
	Ընդամենը՝ շահույթով				**21118.63**
	Չնախատեսված ծախսեր 1.5%				**316.78**
	Չնախատեսված ծախսեր 1.5% /հատկացվում են համապատասխան հիմնավորումների հիման վրա/				**316.78**
	Ընդամենը՝ չնախատեսված ծախսերով				**21752.19**
	ԱԱՀ 20%				**4350.438**
	Ընդամենը՝ ԱԱՀ-ով				**26102.628**

Չափաբաժին 3

գետերի ափերի պաշտպանության աշխատանքներ - ք.Ապարանի «ՔՅԱՆԴԱԼ»կոչվող սելավատարի մաքրում մոտ 2500 մ հատվածում

<<	**Աշխատանքների անվանումը**	**Չափ. միա-վորը**	**Քա-նակը**	**Միավորի արժեքը, հազ.դրամ**	**Ընդհանուր արժեքը, հազ.դրամ**
1	*2*	*3*	*4*	*5*	*6*
	1.Քյանդալ սելավատար				
	1.1 Հողային աշխատանքներ				
1.1.1	Սելավատարի հունի մաքրում թփուտներից և խոտերից	$մ^2$	2624	0.100	262.40
1.1.2	Սելավատարի հունի մաքրում /IV կարգի բնահողեր/ էքսկավատորով կողլիցքով	$մ^3$	1024	0.400	409.60
1.1.3	Սելավատարի հունի մաքրում /IV կարգի բնահողեր/ էքսկավատորով բարձումով	$մ^3$	1315	0.400	526.00
1.1.4	Բարձաց բերվածքների տեղափոխում 4կմ թափոնավայր	տ	2564.25	0.400	1025.70
1.1.5	Սելավատարի հունի մաքրում /IV կարգի բնահողեր/ էքսկավատորով բարձումով բետնային հատվածում / արտաքին խանգարող բետոնային պատերի պայմաններում/	$մ^3$	561.54	0.700	393.08

1.1.6	Սելավատարի հունի մաքրում /IV կարգի բնահողեր/ ձեռքով կողլցումով բետնային հատվածում	մ³	11.46	3.600	41.26
1.1.7	Կողլցված բերվածքների բարձում էքսկավատորով	մ³	11.46	0.400	4.58
1.1.8	Բարձաց բերվածքների տեղափոխում 4կմ թափոնավայր	տ	1117.35	0.400	446.94
1.1.9	Սելավատարի հունի մաքրում /IV կարգի բնահողեր/ ձեռքով կամուրջների տակ, բերվածքների դուրս բերումով կամուրջի տակից կողլցումով էքսկավատորի շերեփին կից	մ³	58	3.600	208.80
1.1.10	Կողլցված բերվածքների բարձում էքսկավատորով	մ³	58	0.500	29.00
1.1.11	Բարձաց բերվածքների տեղափոխում 4կմ թափոնավայր	տ	113.10	0.300	33.93
1.1.12	IV կարգի բնահողերի քանդում էքսկավատորով կողլիցքով / գաբիոնե շարվածքի ստեղծման համար/	մ³	1255.38	0.400	502.15
1.1.13	IV կարգի բնահողերի քանդում ձեռքով կողլիցքով / գաբիոնե շարվածքի ստեղծման համար/	մ³	25.62	3.600	92.23
1.1.14	Գաբիոնի տեղադրում, չոր պայմաններում առանց ցանցի գործման, ներառյալ քարի արժեքը և մատակարարումը	մ³	2944.0	9.500	27968.00
1.1.15	Պատրաստի գաբիոնի ցինկապատ ցանցապարկ 2x1x1 չափերի, լարի Φ2.7մմ, արժեք, մատակարարում	հատ	1472	14.500	21344.00
1.1.16	Ցինկապատ լար գաբիոնի ցանցապարկի կապելու համար, արժեք, մատակարարում	մ	11776.0	0.040	471.04
	<u>Ընդամենը ըստ հողային աշխատանքերի</u>				**53758.71**
	<u>1.2 Բետոնային աշխատանքներ</u>				
1.2.1	Գոյություն ունեցող պատերի քանդված հատվածների վերականգնում միաձույլ բետոնով, B12.5, F150, W4 ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը	մ³	6.00	70.00	420.00
1.2.2	Խամքարաբետոնե հատակի ստեղծում գոյություն ունեցող քանդված հատվածներում, B7.5 դասի բետոնից, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը	մ³	47.5	45.50	2161.25
	<u>Ընդամենը ըստ բետոնային աշխատանքերի</u>				**2581.25**
	<u>Ընդամենը ըստ 1-ին բաժնի</u>				**56339.96**

	2. Քյանդալ սելավատարի ճյուղ				
	2.1 Հողային աշխատանքներ				
2.1.1	Սելավատարի հունի մաքրում թփուտներից և խոտերից	մ^2	244	0.100	24.40
2.1.2	Սելավատարի հունի մաքրում /IV կարգի բնահողեր/ էքսկավատորով կողլիցքով	մ^3	923	0.400	369.20
2.1.3	Սելավատարի հունի մաքրում /IV կարգի բնահողեր/ ձեռքով կամուրջի տակ, բերվածքների դուրս բերումով կամուրջի տակից կողլցումով	մ^3	58	3.600	208.80
2.1.4	IV կարգի բնահողերի քանդում էքսկավատորով կողլիցքով / գաբիոնե շարվածքի ստեղծման համար/	մ^3	115.64	0.700	80.95
2.1.5	IV կարգի բնահողերի քանդում ձեռքով կողլիցքով / գաբիոնե շարվածքի ստեղծման համար/	մ^3	2.36	3.600	8.50
2.1.6	Գաբիոնի տեղադրում, չոր պայմաններում առանց ցանցի գործման, ներառյալ քարի արժեքը և մատակարարումը	մ^3	232.0	9.500	2204.00
2.1.7	Պատրաստի գաբիոնի ցինկապատ ցանցապարկ 2x1x1 չափերի, լարի Φ2.7մմ, արժեք, մատակարարում	հատ	116	14.500	1682.00
2.1.8	Ցինկապատ լար գաբիոնի ցանցապարկի կապելու համար, արժեք, մատակարարում	մ	928.00	0.050	46.40
	Ընդամենը ըստ 2-րդ բաժնի				**4624.24**
	3. Փոստեր սելավատար				
	3.1 Հողային աշխատանքներ				
3.1.1	Սելավատարի հունի մաքրում թփուտներից և խոտերից	մ^2	451	0.100	45.10
3.1.2	Սելավատարի հունի մաքրում /IV կարգի բնահողեր/ էքսկավատորով կողլիցքով	մ^3	30	0.300	9.00
3.1.3	Սելավատարի հունի մաքրում /IV կարգի բնահողեր/ էքսկավատորով բարձումով	մ^3	440	0.400	176.00
3.1.4	Բարձաց բերվածքների տեղափոխում 4կմ թափոնավայր	տ	858.00	0.400	343.20
3.1.5	IV կարգի բնահողերի քանդում էքսկավատորով բարձումով / գաբիոնե շարվածքի ստեղծման համար/	մ^3	290.08	0.700	203.06
3.1.6	IV կարգի բնահողերի քանդում ձեռքով կողլիցքով / գաբիոնե շարվածքի ստեղծման համար/	մ^3	5.92	3.600	21.31
3.1.7	Կողլցված բնահողերի բարձում էքսկավատորով	մ^3	5.92	0.400	2.37

3.1.8	Բարձաց բնահողերի տեղափոխում 4կմ թափոնավայր	տ	577.20	0.400	230.88
3.1.9	Սելավատարի հունի մաքրում /IV կարգի բնահողեր/ ձեռքով կամուրջի տակ, բերվածքների դուրս բերումով կամուրջի տակից կողլցումով	մ³	2	3.600	7.20
3.1.10	Գաբիոնի տեղադրում, չոր պայմաններում առանց ցանցի գործման, ներառյալ քարի արժեքը և մատակարարումը	մ³	240.0	9.500	2280.00
3.1.11	Պատրաստի գաբիոնի ցինկապատ ցանցապարկ 2x1x1 չափերի, լարի Φ2.7մմ, արժեք, մատակարարում	հատ	120	14.500	1740.00
3.1.12	Ցինկապատ լար գաբիոնի ցանցապարկի կապելու համար, արժեք, մատակարարում	մ	960.00	0.050	48.00
	Ընդամենը ըստ 3-րդ բաժնի				**5106.12**
	Ընդամենը ըստ 1-3 բաժինների				**66070.32**
	Շահույթը 11%				**7267.74**
	Ընդամենը՝ շահույթով				**73338.06**
	Չնախատեսված ծախսեր 1.5%				**1100.07**
	Չնախատեսված ծախսեր 1.5% /հատկացվում են համապատասխան հիմնավորումների հիման վրա/				**1100.07**
	Ընդամենը՝ չնախատեսված ծախսերով				**75538.20**
	ԱԱՀ 20%				**15107.64**
	Ընդամենը՝ ԱԱՀ-ով				**90645.84**

* Կապալառուն աշխատանքները կատարում է հասցեում:

2. գետերի ափերի պաշտպանության աշխատանքներ - <<Մեծամոր գետի ափապատնեշի բարձրացում մոտ 800 մ երկարությամբ հատվածում >>	ՀՀ Արմավիրի մարզ Արաքս բնակավայր
3. գետերի ափերի պաշտպանության աշխատանքներ - <<ք.Ապարանի «ՔՅԱՆԴԱԼ» կոչվող սելավատարի մաքրում մոտ 2500 մ հատվածում>>	ՀՀ Արագածոտնի մարզ Ապարան համայնք

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
հեռ. 010 54-02-29
Հ/Հ 900011567386
ՀՎՀՀ 02555816
Կոմիտեի գլխավոր քարտուղար

_____ Ա. ՂԱԶԱՐՅԱՆ
(ստորագրություն)
Կ. Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՄՄՎ ՇԻՆԳՐՈՒՊ» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Նոր-Նարքի Մոլդովական
փող., շենք 27, բն. 78
հեռ. 091-41-47-01
էլ. փոստ mmvshingroup@mail.ru
Հ/Հ 1510056084440100
ՀՎՀՀ 01019617
Տնօրեն

_____ Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
« 29 » հոկտեմբեր 2022 թ. կնքված
ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-22/8-Ա ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
Չափաբաժին 2
« ԳԵՏԵՐԻ ԱՓԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ - ՄԵԾԱՄՈՐ ԳԵՏԻ ԱՓԱՊԱՏՆԵՇԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ ՄՈՏ 800 Մ ԵՐԿԱՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՏՎԱԾՈՒՄ » ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	Նախապատրաստական շրջան	5	
2	Գետի շեպի մաքրում ղամիշմերից և բուսականությունից	2	
3	III րդ կարգի բնահողերի քանդում էքսկավատորով կողլցումով	3	
4	III րդ կարգի բնահողերի քանդում ձեռքով կողլցումով	8	
5	Արգելաթմբի կատարի բարձրացում հողային լիրքով	2	
6	Հողային լիրքի խտացում	2	
7	Հողային լիրքի ստեղծում ձեռքով օգտակար հանույթի բնահողերից, տոփանումով	26	
8	Գաբիոնե շարվածքի ստեղծում	42	
9	Շինաղբի մաքրում և հեռացում	3	
ԸՆԴԱՄԵՆԸ		53 օր	2022

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
Չափաբաժին 3
«ԳԵՏԵՐԻ ԱՓԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ - Ք.ԱՊԱՐԱՆԻ «ՔՅԱՆԴԱԼ» ԿՈՉՎՈՂ ՍԵԼԱՎԱՏԱՐԻ ՄԱՔՐՈՒՄ ՄՈՏ 2500 Մ ՀԱՏՎԱԾՈՒՄ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը *ամիս*	Ավարտը
1	Նախապատրաստական շրջան	15	
2	Սելավատարի հունի մաքրում թփուտներից և խոտերից	5.2	
3	Սելավատարի հունի մաքրում /IV կարգի բնահողերի քանդում/ էքսկավատորով կողլիցքով	8.7	
4	Սելավատարի հունի մաքրում /IV կարգի բնահողերի քանդում/ էքսկավատորով բարձումով	12	
5	IV կարգի բնահողերի քանդում էքսկավատորով կողլիցքով / գաբիոնե շարվածքի ստեղծման համար/	6.0	

6	IV կարգի բնահողերի քանդում էքսկավատորով բարձումով / գաբիոնե շարվածքի ստեղծման համար/	1.6	
7	IV կարգի բնահողերի քանդում ձեռքով կողլիցքով / գաբիոնե շարվածքի ստեղծման համար և կամուրջների տակ/	54.0	
8	Գաբիոնի տեղադրում, չոր պայմաններում առանց ցանցի գործման	137.2	
9	Խամքարաբետոնի և բետոնի տեղադրում	8	
10	Այլ աշխատանքեր	20	
11	Շինաղբի մաքրում և հեռացում	3	
ԸՆԴԱՄԵՆԸ		8 ամիս	2022

Աշխատանքները հաջորդ տարիներ տեղափոխվելու դեպքում կկնքվի համաձայնագիր

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
հեռ. 010 54-02-29
Հ/Հ 900011567386
ՀՎՀՀ 02555816
Կոմիտեի գլխավոր քարտուղար

Ա. ՂԱԶԱՐՅԱՆ
(ստորագրություն)
Կ. Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՄՄՎ ՇԻՆԳՐՈՒՊ» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Նոր-Նարքի Մոլդովական
փող., շենք 27, բն. 78
հեռ. 091-41-47-01
Էլ. փոստ mmvshingroup@mail.ru
Հ/Հ 1510056084440100
ՀՎՀՀ 01019617
Տնօրեն

Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված թիվ 2.1
«29» հոկտեմբեր 2022թ. կնքված
***ՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-22/8-Ա** ծածկագրով պայմանագրի*

ՀՓ2

Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի երաշխիքային ժամկետներ

գետերի ափերի պաշտպանության աշխատանքներ - Մեծամոր գետի ափապատնեշի բարձրացում մոտ 800 մ երկարությամբ հատվածում

Օբյեկտի նախատեսված անհապաղ վերականգնողական աշխատանքների իրականացումից շահագործման նվազագույն երաշխիքային ժամկետների ցանկ

Վերականգնվող հատվածներ	Երաշխիքային նվազագույն ժամկետ, տարի
Գաբիոնե շարվածք	15-18
Հողային լիրք	5

Նյութի կամ կոնստրուկցիայի անվանումը	Համապատասխանեցման սերտիֆիկատի անհրաժեշտությունը	Երաշխիքային նվազագույն ժամկետ, տարի
Քար	այո	50
Պողպատ	այո	40

Մրցույթի հաղթող Կապալառու կազմակերպությունը կապալի օբյեկտի շինարարական աշխատանքները ավարտելուց և այն շահագործման ընդունելուց հետո 1 տարի երաշխիքային ժամկետում պարտավոր է վերացնել թերությունները իր կողմից իրականացնած աշխատանքներում՝ այդ թվում սարքերի և սարքավորումների:

ՀՓ3

Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի երաշխիքային ժամկետներ

գետերի ափերի պաշտպանության աշխատանքներ - ք.Ապարանի «ՔՅԱՆԴԱԼ» կոչվող սելավատարի մաքրում մոտ 2500 մ հատվածում

Օբյեկտի նախատեսված անհապաղ վերականգնողական աշխատանքների իրականացումից շահագործման նվազագույն երաշխիքային ժամկետների ցանկ

Վերականգնվող հատվածներ	Երաշխիքային նվազագույն ժամկետ, տարի
Գաբիոնե շարվածք	15-18

Խամքարաբետոնե հատակ, բետոնե պատ	20

Նյութի կամ կոնստրուկցիայի անվանումը	Համապատասխանեցման սերտիֆիկատի անհրաժեշտությունը	Երաշխիքային նվազագույն ժամկետ, տարի
Քար	այո	50
Պողպատ	այո	40
Բետոն	այո	30

Մրցույթի հաղթող Կապալառու կազմակերպությունը 1 տարի երաշխիքային ժամկետում պարտավոր է վերացնել թերությունները իր կողմից իրականացնած աշխատանքներում՝ այդ թվում սարքերի և սարքավորումների:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
հեռ. 010 54-02-29
Հ/Հ 900011567386
ՀՎՀՀ 02555816
Կոմիտեի գլխավոր քարտուղար

Ա. ՂԱԶԱՐՅԱՆ
(ստորագրություն)
Կ. Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՄՄՎ ՇԻՆԳՐՈՒՊ» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Նոր-Նարքի Մոլդովական
փող., շենք 27, բն. 78
հեռ. 091-41-47-01
էլ. փոստ mmvshingroup@mail.ru
Հ/Հ 1510056084440100
ՀՎՀՀ 01019617
Տնօրեն

Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
«29» հուլիսի 2022թ. կնքված
ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-22/8-Ա ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**						
			հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
2	45241133/16	գետերի ափերի պաշտպանության աշխատանքներ	8 000 000	26 102 628	26 102 628	26 102 628	26 102 628	26 102 628	26 102 628
3	45241133/15	գետերի ափերի պաշտպանության աշխատանքներ	27 190 000	90 645 840	90 645 840	90 645 840	90 645 840	90 645 840	90 645 840

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
հեռ. 010 54-02-29
Հ/Հ 900011567386
ՀՎՀՀ 02555816
Կոմիտեի գլխավոր քարտուղար

_____ Ա. ՂԱԶԱՐՅԱՆ
(ստորագրություն)
Կ. Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՄՄՎ ՇԻՆԳՐՈՒՊ» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Նոր-Նարքի Մոլդովական
փող., շենք 27, բն. 78
հեռ. 091-41-47-01
էլ. փոստ mmvshingroup@mail.ru
Հ/Հ 1510056084440100
ՀՎՀՀ 01019617
Տնօրեն

_____ Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 4
« 29 » հունվար 2022թ. կնքված
***ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-22/8-Ա** ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
«29» հոկտեմբեր 2022թ. կնքված
***ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-22/8-Ա** ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն